

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Պետական պարտք	10
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	11
6.1. Գնաճ	11
6.2. Ավանդներ	12
6.3. Վարկեր	13
6.4. Դրամական փոխանցումներ	16
7. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականը ավարտվել է բավական դրական տնտեսական ցուցանիշներով՝ չնայած նրան, որ տարեսկզբին ռուս-ուկրաինական հակամարտության սրումը էական բացասական սպասումներ էր ձևավորել մասնագետների շրջանում տնտեսական զարգացումների վերաբերյալ: Սպասվող բացասական շուկր ՀՀ-ի համար վերաժվեց դրականի՝ ՌԴ-ից դեպի Հայաստան մեծ քանակությամբ աշխատուժի և կապիտալի ներհոսքի հետևանքով: Բացի այդ, ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պայմաններում էապես աճել է ՀՀ-ից դեպի ՌԴ վերարտահանումը՝ նույնպես դրականորեն ազդելով տնտեսական ակտիվության վրա: Արդյունքում, 2022թ. տարեկան տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 14.2%՝ նախորդ տարվա համեմատ լինելով շուրջ 8.4 տոկոսային կետով ավելի բարձր: Հարկ է նշել, սակայն, որ 2022թ. դեկտեմբերին ՏԱՑ-ը դանդաղել է՝ կազմելով 12.8%՝ նախորդ ամսվա նոյեմբերի 13.8%-ի համեմատ: Նոյեմբերին նույնպես նկատվել էր ՏԱՑ-ի դանդաղում, սակայն եթե այդ ժամանակ առկա էր բազայի ազդեցությունը (նախորդ տարվա նոյեմբերի բարձր ցուցանիշը), ապա դեկտեմբերին դա առկա չէ, հետևաբար աճի տեմպի դանդաղումը կարող է խոսել այն մասին, որ դրական գործոնների ազդեցության չափը աստիճանաբար նվազում է:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2022թ. ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 6.4 և 5.8 տոկոսային կետ: Արդյունաբերության և շինարարության ճյուղերն ավելի փոքր նպաստում են ունեցել՝ համապատասխանաբար 2.1 և 0.6 տոկոսային կետ:


Գյուղատնտեսության ոլորտում 2022թ. արդյունքներով գրանցվել է 0.4% աճ, որը ընդհանուր ՏԱՑ-ին ունեցել է զրոյական նպաստում:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-դեկտեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը¹, %



Արդյունաբերության ոլորտում տարվա ընթացքում որոշ ամիսների գրանցվել են բարձր աճի տեմպեր, սակայն նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ցուցանիշները մտահոգիչ են: Նոյեմբերին արդյունաբերության ճյուղում գրանցվել

¹ Արդյունաբերության ոլորտի նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են, ինչի արդյունքում հունվար-փետրվար, հունվար-մայիս, հունվար-հոկտեմբեր և հունվար-նոյեմբեր ամիսների կուտակային աճերի ցուցանիշները աճել են 0.1 տոկոսային կետով:

է անկում (մասամբ պայմանավորված բազայի էֆեկտով), իսկ դեկտեմբերին աճի տեմպը գրանցվել է բավական ցածր մակարդակում՝ կազմելով 2.7%: Արդյունքում արդյունաբերության ոլորտի թողարկման տարեկան աճը կազմել է 7.8%՝ էապես զիջելով ընդհանուր ՏԱՑ-ի աճին:

2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով² արդյունաբերության 8.5% աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 15.0% աճով (նախորդ ամսվա համեմատ դանդաղել է 3.1 տոկոսային կետով), որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 9.2 տոկոսային կետ: Այստեղ աճին առավելապես նպաստել են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ) և «սննդամթերքի արտադրություն» (նպաստումը՝ 2.3 տոկոսային կետ) ենթախմբերում ընդգրկված ապրանքների արտադրության աճերը, որոնցից առաջինի դեպքում աճը հիմնականում պայմանավորված է վերարտահանման երևույթով:

Հանքարդյունաբերության ոլորտում անկման տեմպը շարունակել է մեղմվել՝ հունվար-հոկտեմբերին արձանագրված 5.1%-ից դառնալով 4.3%: Վերջինս ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.1 տոկոսային կետով: Ընդ որում, մետաղական հանքաքարի արդյունահանման անկումը կազմել է 5.8%, մինչդեռ հանքարդյունաբերության այլ ճյուղերում արձանագրվել է 42.0% աճ:


Արդյունաբերության աճին նպաստել է նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 0.2 և 0.1 տոկոսային կետով:

Արդյունաբերության նոյեմբեր ամսվա անկումը նախորդ տարվա նոյեմբերի համեմատ հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության աճի տեմպի դանդաղմամբ: Մասնավորապես դանդաղել են խոշոր նպաստում ունեցող՝ «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» և «սննդամթերքի արտադրություն» ենթաճյուղերի աճի տեմպերը:

² 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում աճի տեմպը 2022թ. դեկտեմբերին շարունակել է դանդաղել: Շինարարության աճն ընթացիկ տարվա դեկտեմբերին կազմել է 7.3%՝ նոյեմբերի համեմատ դանդաղելով 4.0 տոկոսային կետով: Տարեկան աճի տեմպը կազմել է 12.5%՝ նախորդ տարվա համեմատ արագանալով 5.1 տոկոսային կետով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճը, լինելով 2022թ. տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը, պահպանվել է բավական բարձր մակարդակում: 2022թ. դեկտեմբերին ծառայությունների աճը կազմել է 27.9%, որը թեև ավելի ցածր է, քան

նույնների աճը, սակայն բավական է եղել, որ տարեկան աճի տեմպը պահպանվի 28.2% մակարդակում:

2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով³ ծառայությունների աճն առավելապես պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 12.6, 6.9 և 4.3 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի ոլորտի աճը նույնպես պահպանվել է բավական բարձր մակարդակում և տնտեսական ակտիվության աճին ունեցել է զգալի նպաստում: Առևտրի ոլորտում 2022թ. դեկտեմբերին աճի տեմպն արագացել է՝ կազմելով 23.9%, ինչի արդյունքում կուտակային աճը նույնպես արագացել է և տարվա տվյալներով կազմել է 17.0%:

³ 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ⁴, %




Ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպը 2022թ. վերջին ամիսներին շարունակ դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում: Արտահանման ծավալների ամենաբարձր աճը գրանցվել է սեպտեմբերին՝ կազմելով 158.1%, որից հետո աճի տեմպը դանդաղել է՝ դեկտեմբերին կազմելով 90.2%: Հունվար-դեկտեմբեր ամիսների արտահանման ծավալների աճը կազմել է 77.7%:

2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով⁵ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման շուրջ 3.1 անգամ աճով, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 22.0 տոկոսային կետ, ինչպես նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 12 անգամ աճով, որը 20.8 տոկոսային կետ նպաստում է ունեցել արտահանման աճին: Այս երկու ապրանքախմբերի բարձր աճերը, ինչպես նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 5.6 անգամ աճը (նպաստումը՝ 6.3 տոկոսային կետ) պայմանավորված են վերարտահանմամբ: Նշանակալի են եղել նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 9.0 և 3.3 տոկոսային կետ:

⁴ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-հոկտեմբեր և հունվար-նոյեմբեր ամիսների արտահանման աճի ցուցանիշները վերանայվել են դեպի վերև՝ համապատասխանաբար 0.2 և 1.1 տոկոսային կետով:

⁵ 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁶, %



Ներմուծման աճի տեմպը 2022 թվականին նույնպես բավական բարձր է եղել, սակայն տարվա վերջին ամիսներին սկսել է դանդաղել: 2022թ. դեկտեմբերին ներմուծման ծավալը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել է 60.2%-ով: Այդ պայմաններում հունվար-դեկտեմբեր ամիսների ներմուծման աճի ցուցանիշը որոշ չափով նվազել է՝ կազմելով 63.5%:

Ներմուծման աճին առավելապես նպաստել են (հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով⁷) «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 15.8% և 10.8%: Հենց այս ապրանքախմբերը բավական մեծ չափով նպաստում են նաև արտահանման աճին, ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ արտաքին առևտրի մեծ աճերը հանդիսանում են վերարտահանման հետևանք: Նշանակալի են նաև «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 8.3 և 5.1 տոկոսային կետ նպաստում: Մյուս ապրանքախմբերի ներմուծման ծավալները նույնպես աճել են և ընդհանուր ներմուծման աճին ունեցել դրական նպաստում:

⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսների ներմուծման աճի ցուցանիշը բարելավվել է 0.4 տոկոսային կետով:

⁷ 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2022 թվականին անվանական աշխատավարձի աճի տեմպն արագացել է, սակայն բարձր գնաճի պայմաններում իրական աշխատավարձի աճը բավական ցածր է եղել, իսկ պետական հատվածում՝ նվազող: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2022 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 15.5%-ով՝ կազմելով 235,576 դրամ: Մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 19.0%-ով՝ կազմելով 256,733 դրամ: Սակայն պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է բավական ցածր՝ 4.3% տեմպով և կազմել է 186,940 դրամ:

Պետք է նշել, որ աշխատավարձերի աճին զուգահեռ 2022թ. գրանցվել է բավական բարձր գնաճ՝ 8.6%-ի չափով: Այդ պայմաններում, տնտեսությունում միջին իրական աշխատավարձի աճը կազմել է 6.4%, իսկ մասնավոր հատվածում՝ 9.6%: Եթե հաշվի առնենք, որ ՏԱՅ-ը, որը իրական աճի ցուցանիշ է, կազմել է 14.2%, ապա ակնհայտ է դառնում, որ իրական աշխատավարձերի աճը (ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր հատվածի) էապես զիջում է տնտեսությունում ստեղծվող արդյունքի աճին, ինչը նշանակում է, որ ստեղծվող լրացուցիչ արդյունքն անհավասարաչափ է բաշխվել՝ առավելապես բաժին հասնելով սեփականատերերին, այլ ոչ թե աշխատողներին:


Առավել մտահոգիչ է պատկերը պետական հատվածում, որտեղ ներառվում են նաև ուսուցիչները և պետական հաստատություններում աշխատող բժիշկները: Անվանական աշխատավարձի 4.3% աճի և 8.6% գնաճի պայմաններում ստացվում է, որ իրական աշխատավարձը նվազել է շուրջ 4.0%-ով: Այսինքն, բարձր տնտեսական աճի պայմաններում, ՀՀ վարձու աշխատողների զգալի մասի (շուրջ 30%-ի) կենսամակարդակը էապես նվազել է:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-դեկտեմբերին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)





ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ վերջին ամիսներին կայունացել է, սակայն տարեկան արդյունքներով էապես արժևորվել է նախորդ տարվա համեմատ: ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022 թվականին արժևորվել է շուրջ 15.6%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 29.4%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպն ավելի ցածր է եղել՝ կապված ՌԴ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 5.5%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁸

5.1. Պետական պարտք

2022թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը հասել է 10.6 մլրդ ԱՄՆ դոլարի՝ նախորդ տարվա համեմատ աճելով 15.3%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես արագ տեմպով աճել է՝ կազմելով 10.1 մլրդ ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 15.0%-ով: Սակայն փոխարժեքի արժևորման հետևանքով դրամային արտահայտությամբ և՛ պետական, և՛ կառավարության պարտքը նվազել է՝ համապատասխանաբար 5.5 և 5.7 տոկոսով:


2022 թվականին աճել է ներքին պարտքը՝ շուրջ 62.5%-ով (դրամային արտահայտությամբ՝ 33.2%-ով), իսկ արտաքին պարտքը նվազել է 4.7%-ով (դրամային արտահայտությամբ՝ 21.9%-ով): Եթե 2023թ. պետական բյուջեի հիմքում դրված 2022թ. համար կանխատեսվող անվանական ՀՆԱ-ն (8,293.7 մլրդ դրամ) իրականություն դառնա, ապա կառավարության պարտք/ՀՆԱ

⁸ Պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և պակասուրդի դեկտեմբեր ամսվա ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, այդ պատճառով դրանց վերլուծությունը ներկայացված չէ սույն տեղեկանքում: Տվյալների հասանելի դառնալուց հետո առանձին կհրապարակվի հարկաբյուջետային հատվածի 2022թ. զարգացումների վերաբերյալ տեղեկանքը:

հարաբերակցությունը 2022 թվականին կկազմի 47.9%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 12.4 տոկոսային կետով:

Դեկտեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են մնալ բարձր մակարդակում: Մասնավորապես, կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 2.6 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 2.3 տոկոսային կետով:


Գծապատկեր 11. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 12. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը 2022 թվականին եղել է բավական բարձր, սակայն տարեվերջին ցուցաբերել է դանդաղման միտում: 2022թ. վերջին ամիսներին գնաճի տեմպը սկսել է դանդաղել՝ դեկտեմբերին հասնելով 8.3%-ի: ՀՀ կենտրոնական բանկը 2022թ. ընթացքում ընդհանուր առմամբ 3.0 տոկոսային կետով բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 10.75%, ինչը համահունչ է եղել գործընկեր երկրներում (հիմնականում զարգացած երկրներում) վարվող դրամավարկային պայմանների խստացման քաղաքականությանը:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 13. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. դեկտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները զգալիորեն աճել են: 2022թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 27.3%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.4 տոկոսային կետով և նախորդ տարվա աճից բարձր լինելով 18.8 տոկոսային կետով: Ավանդների աճի նման կտրուկ արագացումը հիմնականում պայմանավորված է ոչ ռեզիդենտների ավանդների 62.4 տոկոս աճով: Ընդ որում, աճը հիմնականում պայմանավորված է եղել արտարժույթային ավանդների շուրջ 1.3 մլրդ դոլարի չափ աճով (եթե հաշվի չառնենք փոխարժեքի արժևորումը, ապա ոչ ռեզիդենտների արտարժույթային ավանդների աճը կկազմի շուրջ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար): Ռեզիդենտների ընդհանուր ավանդներն աճել են 17.5%-ով:

Գծապատկեր 14. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 13.6 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները: Ռեզիդենտների շարքում աճել է ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը՝ հասնելով 40.4%-ի, որն ընդհանուր ավանդների աճին ունեցել է 7.9 տոկոսային կետ նպաստում (նախորդ ամսվա 7.7-ի դիմաց), իսկ տնային տնտեսություններից ներգրավված ավանդների ծավալն աճել է 10.7%-ով՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 5.1 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


2022թ. դեկտեմբերին վարկերի աճը շարունակել է արագանալ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 6.1%-ով՝ արագանալով 1.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 15. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը հիմնականում տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի 6.2% աճի հաշվին, որը ընդհանուր վարկերի աճին նպաստել է 5.9 տոկոսային կետով: Իսկ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը կազմել է 4.3% և ընդհանուր վարկերի աճին նպաստել է 0.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 16. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 15.9% աճով, ինչը նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.2 տոկոսային կետով: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի ծավալը 2022թ. դեկտեմբերին նվազել է 2.1%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների⁹ շարքում վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 29.7%, իսկ նպաստման չափը՝ 5.1 տոկոսային կետ: Վարկերի աճին էական նպաստում են ունեցել նաև ծառայությունների ոլորտին տրամադրվող վարկերը և սպառողական վարկերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.5 և 1.9 տոկոսային կետ:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 18. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի մեծ ծավալները պահպանվել են մինչև տարեվերջ: 2022թ. դեկտեմբերին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 301.9 մլն ԱՄՆ դոլար (նախորդ ամսվա 225.3-ի դիմաց)՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով շուրջ 3.9 անգամ: Տարվա ընթացքում դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է շուրջ 2.6 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով շուրջ 2.9 անգամ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2022 թվականի տնտեսական ցուցանիշները բավական տպավորիչ են, սակայն հիմնված չեն կայուն և տնտեսության ներուժը մեծացնող գործոնների վրա: Մասնավորապես, տնտեսական ակտիվության բարձր ցուցանիշներ են գրանցվել մի կողմից՝ ՌԴ-ից դեպի ՀՀ մեծ քանակությամբ աշխատուժի և կապիտալի ներհոսքի, մյուս կողմից՝ ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պայմաններում ՀՀ-ից վերարտադրանքային աննախադեպ աճերի արդյունքում: Սակայն պետք է հիշել, որ աշխարհաքաղաքական գործոնները, որոնք պայմանավորել են վերոհիշյալ հոսքերը, կարող են անսպասելիորեն փոխվել, ինչը կարող է փոխել նաև ՀՀ-ի համար բարձր տնտեսական աճի գործոնների դինամիկան՝ առաջացնելով տնտեսական աճի դանդաղում: Այս առումով, 2022թ.

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:

բարձր տնտեսական ակտիվությունը չի կարող համարվել կայուն, ինչը պետք է հաշվի առնել հաջորդ տարիների պետական քաղաքականության մշակման ժամանակ:

2. Արդյունաբերության աճի տեմպը էականորեն զիջել է ընդհանուր տնտեսության աճի տեմպին, ինչը նշանակում է, որ արդյունաբերության կշիռը տնտեսությունում նվազել է: Սա նույնպես խոսում է 2022թ. տնտեսական աճի ոչ բավարար «որակի» մասին: Խնդիրն այն է, որ բարձր աճի շարժիչ ուժ հանդիսացող ոլորտները ծառայությունները և առևտուրն են, որոնք կայուն չեն և դրական շուկերի չեզոքացման պարագայում (օրինակ՝ ՌԴ քաղաքացիների արտահոսքի կամ դրամական փոխանցումների նվազման դեպքում) կարող են կտրուկ անկում ապրել՝ տնտեսությանը թողնելով արդեն իսկ «թուլացած» ներուժով (փոքր արդյունաբերության կշիռով) և նույնպիսի արտահանելի հատվածով, որը կորցնում է մրցունակությունը փոխարեժքի արժևորման հետևանքով:

3. Ֆինանսական համակարգում ավանդների և վարկերի դինամիկան նույնպես մատնանշում է տնտեսության ներուժի ոչ բավարար աճի մասին: Մասնավորապես, բանկային համակարգում 2022 թվականին էականորեն աճել են ձեռնարկությունների ավանդները, մինչդեռ ձեռնարկություններին տրամադրված վարկերի ծավալը նվազել է: Այս իրավիճակը խոսում է ներդրումային ակտիվության նվազման մասին, քանի որ ձեռնարկությունները իրենց ազատ միջոցները ներդնելու փոխարեն տեղաբաշխում են բանկերում, և նոր վարկեր չեն ներգրավվում: Իսկ ցածր ներդրումային ակտիվությունը միանշանակ բացասական գործոն է տնտեսության ներուժի և երկարաժամկետ կայունության տեսանկյունից:

4. Իրական աշխատավարձերի աճը մնացել է ցածր մակարդակում, ինչը մի կողմից նշանակում է, որ տնտեսությունում ստեղծվող արդյունքն անհավասարաչափ է բաշխվել՝ առավելապես բաժին հասնելով սեփականատերերին, այլ ոչ թե աշխատողներին, մյուս կողմից ցույց է տալիս, որ բարձր տնտեսական աճի պայմաններում, ՀՀ աշխատող բնակչության զգալի մասի կենսամակարդակը էապես նվազել է: Տնտեսությունում միջին անվանական աշխատավարձերը զգալի աճել են 2022թ.: Սակայն, միաժամանակ էական է եղել նաև գնաճը, ինչի արդյունքում իրական աշխատավարձերի աճը մնացել է ցածր մակարդակում: Այսպես, իրական միջին աշխատավարձը ընդհանուր տնտեսությունում աճել է 6.4%-ով, մասնավոր հատվածում՝ 9.6%-ով, իսկ պետական հատվածում՝ նվազել է 4.0%-ով: Սա բավական մտահոգիչ է մի քանի պատճառներով: Նախ՝ եթե հաշվի առնենք, որ ՏԱՅ-ը, որն իրական աճի ցուցանիշ է, կազմել է 14.2%, ապա ակնհայտ է դառնում, որ իրական աշխատավարձերի աճը (ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր հատվածի) էապես զիջում է տնտեսությունում ստեղծվող արդյունքի աճին, ինչը նշանակում է, որ ստեղծվող

լրացուցիչ արդյունքն անհավասարաչափ է բաշխվել՝ առավելապես ուղղվելով շահույթների մեծացմանը և բաժին հասնելով սեփականատերերին, այլ ոչ թե աշխատողներին: Մյուս կողմից, մտահոգիչ է պատկերը պետական հատվածում, որտեղ ներառվում են նաև ուսուցիչները և պետական հաստատություններում աշխատող բժիշկները: Այստեղ իրական աշխատավարձը նվազել է շուրջ 4.0%-ով: Այսինքն, բարձր տնտեսական աճի պայմաններում, ՀՀ վարձու աշխատողների զգալի մասի (շուրջ 30%-ի) կենսամակարդակը էապես նվազել է:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: